



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

22.07.2021թ.

Արմավիրի մարզպետ
Պարոն Համբարձում Մաթևոսյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80, e-mail: grisha.balasanyan@hetq.am

Հարգելի պարոն *Մաթևոսյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին:

1. 2019-2021թթ. սուբվենցիոն կամ որևէ այլ ծրագրով Արմավիրի մարզի որ համայնքներում են իրականացվել ոռոգման ջրի ներքին ցանցերի բարելավման աշխատանքներ (խողովակներ, կիսախողովակներ և այլն): ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների, համայնքների, աշխատանքի բնույթի և ծավալի, իրականացված ծրագրի:***

2. Մարզի ո՞ր համայնքներն ունեն ոռոգման ներքին ցանցի բարելավման խիստ անհրաժեշտություն և այդ ուղղությամբ ի՞նչ աշխատանքներ են կատարվում: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների:***

3. Մարզպետարանի կողմից ուսումնասիրություն կատարվե՞լ է, թե որքան է կազմում մարզում բարելավման կարիք ունեցող ոռոգման ցանցի երկարությունը: Դրանից որքա՞նն է կազմում համայնքների ներքին ցանցերի երկարությունը:

4. Ոռոգման ներքին ցանցերի անմխիթար կամ ոչ բարվոք վիճակի պատճառով հատկապես որ համայնքներն են ունենում ոռոգման ջրի կորուստ կամ լուրջ դժվարություններ և ինչ աշխատանքներ են իրականացվում այդ ուղղությամբ: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների:***

5. Մարզում ո՞ր համայնքների հողերն են համարվում գերնորմատիվային: ***Տրամադրել այդ համայնքների ցանկը և յուրաքանչյուրի գերնորմատիվային հողերի մակերեսը:***

6. Գերնորմատիվային հողեր ունեցող համայնքների ոռոգման ներքին ցանցերն ի՞նչ վիճակում են և արդյոք այդ վիճակը նպաստում է լրացուցիչ ջրի կորուստին: Ինչ քայլեր է իրականացվում այդ ուղղությամբ: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների:***

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. Բալասանյան